**Հավելված**
**Գյումրի համայնքի «Լիանա – մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ–ի**
**տնօրենի 2025 թվականի մարտի 14–ի N 11-Լ հրամանի**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Լիանա– մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին**

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ,Լիանա– մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկակական կուլտուրայի հրահանգիչ (0.5դրույք)** | **1 ) Որակավորման պահանջները՝**<br>**նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝**<br>1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ:<br>2) **Ընդհանրական պահանջները**.<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողը պետք է՝<br>1) տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնի-կայով աշխատելու հմտություններին.<br>2) իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները<br>ա.Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, <<Կրթության մասին>>,<<Հանրակրթության մասին>>, <<Նախադպրոցական կրթության մասին >>,<< Լեզվի մասին >>, <<Երեխայի իրավունքների մասին>>, << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>,<< Լիցենզա-վորման մասին>> օրենքները,Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը,<<Նախադպրոցական ուսում-նական հաստատության օրինակելի կանոնադրությունը >>, Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման | Մրցույթին մասնակցելու իրա-վունք չունի այն անձը, որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեու-թյամբ զբաղվելու իրավունքից.<br>3) տառապում է ՀՀ կառավա-րության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավար-ժական գործունեության իրակա-նացմանը.<br>4) դատապարտվել է հանցագոր-ծության համար, և դատվածու-թյունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1)դիմում (Ձև 1).<br>2) կրթության մասին փաստաթուղթ.<br>3) անձը հաստատող փաստաթուղթ.<br>4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5) ինքնակենսագրություն.<br>6) մեկ լուսանկար՝3x4 չափի.<br>7) այլ պետությունների քաղաքացի-ները՝ Հայաստանի Հանրապետու-թյունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |

| | | | |
|---|---|---|---|
| | լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.<br>բ. նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի, անատոմիայի, մարզագործիքնե-րի վրա ուսուցման մեթոդիկայի հիմունքներին. | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| **Վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, Գյումրու համայնքապետարան 3–րդ հարկ, նիստերի դահլիճ օրը՝ 2025 թվականի ապրիլի 16–ին, ժամը՝ 10:30** | **Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրի համայնքի ,Լիանա – մուսը մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (հեռ. 094 50-40-73): Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի,22 հոկտեմբերի 2024 թվական N1981 - Ա/2 հրաման):**<br>**Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:** | | **2025 թվականի ապրիլի 10-ը ներառյալ:** |